

### ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՄԸ ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆԻՔ

#### ԺԱՄԱՆԱԿՆ ԵՒ ՊԱՏԱՆԻՔ

Պատանիք մեծ հարստութիւն ունին ձեռքերնին, եթէ գիտնան ժամանակը իրենց դրամագլուխ ընել, գործածելով զայն՝ ոչ թէ ինչպէս որ կ'ուզեն, այլ ինչպէս որ պէտք է: Պատանի մը որչափ ալ խեղճ ըլլայ, սակայն միշտ ճոխ դրամագլուխ մ'ունի, ուսկից մեծամեծ շահեր կրնայ ձեռք բերել: Այս դրամոց գլուխն ժամանակն է, և սորա բարւոք գործածութիւնն յիրաւի անջին և ստոյգ շահ յառաջ կը բերէ: Եւ մանաւանդ այնպիսի գրամագլուխ մ'է սա, որ առանց աշխատութեան չենք կարող մեզ սեպհականել: Բաէք ինձ, ով պատանիք, երբ յանկարծ վար իյնալով ձեռքերնիդ ցեխտաի, այն ջուրն՝ գոր լուացուելու կը գործածէք՝ ձերը չի համարուիր. բայց եթէ զայն չգործածէք՝ ձերը կրնայ համարուիլ: Այսպէս է նաև ժամանակին գործածութիւնն. եթէ ՚ի ձեռն ժամանակին լուանաք մեր վրայէն այն աղտը՝ որ տգիտութեամբ և չար կամօք խառարցուցեր է մեր հանճարը ու միտքը, երանելի և երկանելի կ'ըլլանք. բայց այն ատեն ժամանակը մեզ հաստատուն դրամագլուխ կը ստանանք, երբ զայն ՚ի շահ մեզ ծառայեցընենք, ապագային նախապարաստութիւն տեսնելով, ուսանելով միշտ և միանգամայն կրթելով զմեզ գիտութեանց, գեղարուեստից, գովելի կրթանաց և փորձառութեանց մէջ. ոչ թէ յախտաւոր և ծոյլ կեանք վարելով, այլ աշխոյժ և փութաջան գտնուելով առաքինական գործոց մէջ, շահաւոր և պատշաճ աշխատանք:

Բայց ինչպէս կրնայ բարւոք գործածուիլ որ այն բանը՝ որոյ վրայ տեղեկու-

թիւն չունի: Ուստի նախ պէտք է որ դուք ժամանակն իւր մասանց վրայ բաժնէք, որպէս զի անցեալը ներկայ չկարծէք, և ոչ ալ զձեզ ապառնոյն բացարձակ տէր համարիք: Այս բաժանունըն ամենահարկաւոր է, ուսկից և ամէն մարդ կախումն ունի, որովհետև ամէնքն ալ իրենց վիճակին և կարողութեան համեմատ ՚ի շահու գըրած են, և կան ալ որ պիտի սկսին ՚ի շահու տալ այս դրամագլուխը իրենց կարողութեան չափովն: Իսկ ով որ ժամանակին այս զանազանութիւնը չընէր, կամ զժամանակը չշահեցընելով՝ օգուտ մը չի քաղեր անկից, և կամ անկատար բան մը կը քաղէ:

Յուշիտս կողմն հռչակաւոր պատեւրազմովն, որ յետոյ Հոռովայեցոց ծերակուտին անդամ ընտրուեցաւ, բարձրահասակ էր և յաղթանդամ. երկու որդի ունեցաւ, որոցմէ առաջինն տանուհինդ և երկրորդն տանուերկու տաւուան էին, զորս դպրատուն զրկած էր ուսումն սորվելու: Երբ օր մը Յուշիտս կողմն իւր որդւոց այցելութեան գնաց, զանազան իրաց վրայ շատ մը հարցմունք ընելէն յետոյ, իմացաւ որ դաստիարակն անոնց վրայ դանգառ կ'ընէր. վասն զի առաջինն չէր ուզեր բնաւ ուսման մէջ քայլ մ'ալ յառաջ դրիմել, և տղու պէս կը զրօսնոյր. իսկ երկրորդն ծաղր կ'ընէր իւր ընկերակիցները, և կ'ուզէր որ զինքը իբրև մեծ յարգեն. ուստի երկուքն ալ անարժանութեամբ կը կրէին ուսանողի ըզգեստը: Հրամայեց հայրն որ առաջնոյն այն զգեստը հագցընեն՝ որ ատարտարի առաջ կը զգենոյր, և զինքը ազատ իւր կամայը թողուն. իսկ վերջնայն՝ հօրը սինկկիտոսական զգեստը բերեն զգեցընեն, և այսու՝ որպէս զի, բնաւ, հասկընան թէ որչափ տարբեր-

բութիւն կոյ մարդ ըլլալուն և տղայ ըլլալուն մէջ, ներկային և անցելոյն մէջ: Երբ ստուգիւ հրամանն կատարուեցաւ, որդւոցմէ առաջնէն շունչը բռնուեցաւ՝ մանկական նեղ զգեստուցը տակ իսկ երկրորդն կարծես թէ կը խղզուէր ծանրակշիռ պատմութեանն ներքև: Ուստի օր մը միայն բաւական եղաւ՝ այն ներդաշուցիչ զգեստներով իմացընել տղայոց՝ թէ մանկական հասակն անցուցած էին ու սյրական հասակին գեռ հասած չէին: Պէտք է ուստի ներկայ ժամանակին, յարմարիւ և բարի առաջնորդութեամբ մը ազազային պատրաստութիւն տեսնել:

Եւ իբրացընէ, այս ինքզինքնիկ ներկային, յարմարցընելէն, առանց մոռանալու ոչ անցեալը և ոչ ապագայն, այլ երկու ծայրերէն խորշելով միջին ճամբէն երթալնէ՞ր կը կախուին ձեր ներկայ կենաց մէջ կատարելիք ամէն լուազոյն գործերն: Բայց այսու հանդերձ պէտք է որ համոզուիք թէ պատանի մը՝ որչափ ալ ՚ի բնութենէ ստացած ըլլայ սրտի և մտաց գերազանց ձիրքեր, ՚րչափ ալ՝ կ'ըսեմ՝ պիտուի՞նք և բարի կամբ ունենայ, բայց նա իւր անցուցած ժամանակը չկարենալով շահեցընել և կամ ամենանուազ օգուտ քաղելով անկից, միշտ պակասաւոր պիտի գտնուի այն ամենազնիւ ձիրքէն՝ որ է փորձն: Այս գանձա՝ որ խիստ հարկաւոր է պատանեկական հասակին առաջնորդութեան համար, բնութիւնն զժգաղզաբար չէ չնորհած անոնց. ուստի այս պակասութեան փութարէն՝ պիտի լեցընէ տգնիւ գաստիարկաց փորձառական գիտութիւնն: Առ այժմ պէտք է որ տղայք ուրիշին փորձով խորհրդածեն և այնու գործեն: Վայ այն պատանւոյն՝ որ ուզենայ ամէն բան իւր փնաստփն ճանչնալ, իւր նախորդին ուսուցածին հաւատք չընծայէ, և անոր իսկ՝ որ կրնայ գիւրացընել ուսմանց աշխատանքը, նաև բնութեան զգացումները զպալլ, առաջնորդելով իրեն փոքր առ փոքր՝ ուր որ ինքն պիտի գայթէր, յետոյ

զըմտմբ՝ անստուգութեան մէջ պիտի տատանուէ: Աւելի պարզ ըսեմ. օրինակ իմն, եթէ պարտաւորութիւն ճանապարհորդութիւն մ'ընել, բայց չուզենաս հետեիլ այն անձին, որ ուրիշ անգամ նոյն ճանապարհորդութիւնը կատարի է և կրնայ առաջնորդել քեզի, այն ատեն պարտաւորութիւն կրկին անգամ զժուարութեամբ նոյն ճամբան ընել և այն ալ գէշ կերպով: Ինչպէս, թէ ուզենաս լողալ վարժիլ, և սակայն արհամարհես վարժապետին ուսուցածը, որով վտանգի մէջ կը գնես զքեզ երկայն միջոց, մինչև անգամ չուր հարձակ և թերեւ խեղդուիլ իսկ հանդիպի. և սակայն իրչափ շուտով պիտի վարժէիր՝ եթէ փորձ անձի մը առաջնորդութեանն հետեւելով լողալիր:

Բայց երբ ուզես զքեզ փորձառութեան տալ, ոչ միայն հաւատարմութիւն, այլ նաև քաջարտութիւն և գործունէութիւն պէտք է: Քաջաւորութեամբ պիտի յաղթանակես մանկական ունակութեանցը, և միանգամայն պիտի առես ազէտ և կամակատար ընկերացող չար օրինակները. իսկ գործունէութեամբ՝ հոգւոյդ վնասն չարժամանցն հետեւելով պիտի ցուցընես քու կարողութիւնդ, և առ այժմ առաջնորդով մը ընթանալով այն ճամբան, օր մը միայնակ պիտի կարենաս երթալ: Բայց զքեզ ուրիշին փորձառութեան յանձնելով պիտի չկարծես թէ ամենայն ուղիով ինքն անցած ևս. վասն զի փորձառութիւնն նաև ունի զկեն է, որոյ կը պակասին նաև թիւս ձիգըն. ուստի ան առաջատաններն՝ որպէս զի դասով երթայ նաև. ընկերական առաքինութեանց ասպարէզն միշտ հակառակ մրցելով տղիտութեանց և ախտից՝ կը պահանջէ որ բովանդակ զօրութիւնդ ՚ի գործ գնես՝ ոչ միայն յառաջագիմելու համար, այլ որպէս զի նաև ետ չմղուիս:

Եւ սակայն ՚ի տղայոց շատերն իսկ՝ իրենց ծնողաց տունը կ'ապրին՝ ինչպէս թէ Դրախտին մէջ ըլլային, միշտ զբաղեալ ըլլալով ուսմանց և զուարճու-

թեանց . իրենց ընկերաց հետ կը կեն-  
ցաղապարին , բնաւ չանցընելով իրենց  
մտքէն՝ անցելոյն և ապագայ կենաց  
մտածութիւնքը , կարծելով միանգա-  
մայն թէ ամենայն ինչ մշտատես է . այս-  
պէս նաև այն անձինքն՝ որոց մէջ ին-  
քը կը կենցաղապարի , իւր ծնողքն և  
անոնց ներկայ վիճակն՝ յորում կը զըտ-  
նուի՝ անշարժ և անփոփոխ կ'երևան  
իւր մտաց առջև . — Բնաւ ուշ դրած  
չէք այն երագութեանն՝ որով իրք կը  
ծնանին , կը մեծնան ու կը յայրուգեն  
էրերայ , կը մտածէք երբեք թէ աշ-  
խարհաց վրայ չկայ էակ մը՝ որ կարե-  
նայ ըսել . կամ էս և հաստատաւ եմ :

Արդ թէ վայրկեան մը ուշիմ մտօք  
'ի ձեզ ամփոփէք ուշադրութիւննիդ , կը  
բացուին իրաւցընէ ձեր մտաց առջև  
իրաց մշտափոփոխ տեսարաններն , ո-  
րոց վրայ թերևս մինչև ցայժմ մտա-  
զրութիւն ըրած չէիք : Ահաւասիկ զա-  
նազան գաղափարաց և մտածութեանց  
անհամար թիւ մը , որոնք կը չըջին մը-  
տաց մէջ . յորոց շատերն դեռ հազիւ  
կը ծնանին 'ի միտս , այլք արդէն իսկ  
խորհրդածուեր և պատրաստած են  
'ի գործադրութիւն , ոմանք կ'անցնին  
և այլք վերստին կը դառնան 'ի միտս :  
Կան մտածութիւններ՝ որոնք անկար-  
ծելի կերպով կը ծնանին մտաց մէջ , և  
կան ալ՝ որ դժուարաւ մտօք կը զըտ-  
նեն , և կը ձուլուին նախընթաց մտա-  
ծութեանց հետ : Մէկ կողմանէ իբրև  
հաստատուն աստեղք՝ կը թուալին ան-  
ցեւոյն յիշատակներն . մօր մը նախկին  
գ.գ.ուանքն , հօր մը առաջին սիրոյ համ-  
բայրն , մանկութեան առաջին զբօսանք-  
ներն , տեղեաց , անձանց և սրտի ա-  
ռաջին անգամուան զգացած տպաւո-  
րութիւնքն : Այս մտածութեանց առջև  
կ'անհետանան 'ի բաց ներկայ կենաց  
անձկութիւնք , թեթեամտութիւնք և  
զաղափարք . անցելոյն և ներկային  
բաղդատութիւն , նմանութիւնք և ան-  
նմանութիւնք , սխալմանց ճանտյումն  
և զղլումն , որոնք կը ջանան երևոյթ ու-  
նենալ անմեղութեան ամբիժ վարդե-  
րոյն , և տեղի պիտի տան նորանոր ու-

րոշողութեանց և առաջադրութեանց :  
Բայց հազիւ թէ այս ուրախութեան ըզ-  
գացումը կը զգար , մէկէն երկիւղն ներս  
մտնելով կը պատերազմի այն մտածու-  
թեանց հետ , և 'ի մի խառնուելով՝ ըզ-  
ձեզ ձանձրութեան և տարակուսի մէջ  
կը ձգէ : Ահաւասիկ ապառնոյն զաղա-  
փարն՝ որ իւր տեսարանաց առագաստ-  
ները ձեր հոգւոյն մէջ կը պարզէ , ու  
ընդարմացընելով սրտերնիդ՝ ըստ կամս  
իւր կը վարէ զայնս : Թէ և կորուսանէք  
արթնութիւննիդ , այլ նոյն իսկ քնոյ  
մէջ երևակայութեան զօրութեամբ վե-  
րստին կրկնուելով օրուան տեսարան-  
ներն՝ թէպէտ խանդարեալ , սակայն  
ձեր մտաց բոլոր կարողութիւնքն 'ի  
չարժման կը բռնեն , Տեսած էք արդեօք  
գեղեցկադէտ մը ( Kaléidoscope ) , որոյ  
իւրաքանչիւր շարժումն ձեր աչքին  
զանազան տեսարաններ կը ներկայա-  
ցընէ . մերթ տերևոց խուրձ մը՝ հան-  
դերձ ծաղկամբ , մերթ բոլորած ծաղ-  
կանց փունջ մը , պսակ մը , աղբիւր  
մը , պատուհան մը , լուսամտի՝ երկա-  
թեայ վանդակիկ մը , աստղ մը , գե-  
տակ մը . նոյնպիսի մտածութեամբք  
կը զբաղիք քնացած ատեննիդ և ամէն  
անգամ դիպքերնիդ փոխուելուն՝ կը  
ներկայանայ առջևնիդ անպատմելի ըզ-  
գացմանց պարտահանդէս մը , մերթ  
զուարթ , մերթ տխուր , երբեմն յափըչ-  
տակիչ և երբեմն ազմկալից տեսա-  
րաններով . փափաքներն իրարու կը  
յայրողեն և պատրանք պատրանաց .  
յարաբոփոխ , դիտարանցիկ և անդադար  
բաղձանք մը՝ կարծես շոգւոյ մլման ա-  
րագութեամբ , եթէ կարելի է այսպէս  
ըսել , կը քայէ կը տանի յուսոյ և անձ-  
կութեանց կառքերու շարք մը , և ա-  
ռանց իսկ ուղեւոր՝ կը տեղափոխէ ըզ-  
քեզ տեսնելու , լսելու , զգալու անհա-  
մար դիպուածոց իրարանցում մը , որք  
կ'այլակերպին՝ գարձեալ փոփոխուելու  
համար , և չեն անհետանար՝ քնոյ ան-  
հետանալով , վասն զի առաւօտեան  
նոր գաղափարներով՝ կը կրկնուին  
դարձեալ և նոր չըջան մը կը սկսին :

Փորձ փորձեցէք ուրեմն , ս' պատա-

նիք, թէ կրնաք արեօք խաղաղցրենել  
 ձեր հոգւոյն այսպիսի նորօրինակ կրած  
 այլայլութիւնը, և բռնադատեցէք և  
 համարձակ ըսէք ձեր մտայ՝ թէ խաղա-  
 դէ, ո՛ր միտք, կայ, հանգիր. ձեր թէ  
 միտքն թէ յիշողութիւնն և թէ ձեր  
 սիրտն այն օրինաց պիտի հնազանդին՝  
 սր զիրենք ստեղծեց ու կը պահէ. ուս-  
 տի չեն կրնար դործելէ ետ կենալ:  
 Այս տեսարանս այնչափ աւելի սքան-  
 չելի է՝ որչափ և անընդհատ: Այդ մեր  
 հոգւոյն գործոց և փոփոխութեանց  
 ներքին տեսարանն, պատկեր է արտա-  
 քին իրաց այն յարափոփոխ և արագ  
 արագ շարժմանց՝ որով իրարու կը յա-  
 ջորդեն, մէկմէկու տեղը կը բռնեն, և  
 կ'անհետանան. անոխալ վկայ է այն  
 բնազդ ման՝ զոր Ստեղծիչն բովանդակ  
 աշխարհի շնորհաց, և այն օրինաց՝ որ  
 բարձր և յայտնաբարող ձայնիւ ան-  
 դադար կը կրկնէ ամենու՛ն՝ շարժէ, փո-  
 փոխուէ և անցիր:

Մի է նոյն փոփոխութեամբ՝ որով  
 տեսաք ծնանիլ, փոփոխիլ և ոչնչանալ  
 ձեր մտաց գաղափարներն և խորհուրդ-  
 ներն, կը փոխուին, կը հաստատուին  
 և կը վերջանան նաև թագաւորու-  
 թիւնք, պետութիւնք, գերդաստանք  
 և մարդիկ: Ուր երբեմն կը բարձրա-  
 նային հոյակապ քաղաքներ, արդ խո-  
 տեր միայն կը բուսնին, և ուր երբեմն  
 անգետք կը ճարակէին, արդ կ'ամբառ-  
 նան քաղաքք և դղեակք: Քանի մը  
 տարի առաջ չկար և ոչ իսկ ձեր բնա-  
 կած տունն, բայց միայն լայնատարած  
 չէնք մը կը տարածուէր բոլոր դաշտին  
 վրայ՝ ուր արդ եզներն կ'արօրեն: Ար-  
 դեօք ասկից երեսուն տարի առաջ ուր  
 էիք, և յիսուն տարի վերջը ո՛ր պիտի  
 ըլլաք: Չեր գերդաստանք ինչ պիտի  
 ըլլան և դուք իսկ ինչ պիտի ըլլաք:  
 Պանդուխտք եմք և պանդուխտ են նաև  
 անոնք՝ որոց պէտք է կուտիլ ընդդէմ  
 դատարկութեան և պարապութեան,  
 կտրելով անցնելով մեր առջև դրուած  
 ճանապարհը:

Մինչև ցայժմ՝ նեղութիւն չկրեցիք  
 ձեր զգեստը և հացը ճարելու, և հիմայ

վայելուչ հագուեր էք ու փափուկ մեծ,  
 ցեր. բայց դիտնայիք թէ ինչ է ձեր  
 ծնողաց թափած քրտոնց և նեղու-  
 թեանց ամէնը, որով կը ճգնին զձեզ  
 այսպէս գուարթի և հանդարտ պահե-  
 լու. դիտնայիք դարձեալ թէ սրչափ  
 կը ցանկան անոնք տեսնել այն վայր-  
 կեանք, յորում պիտի կարենաք գտեք  
 զձեզ հոգալ. և այն ապականեալ թե-  
 րութեանց մէջ՝ միայնակ առանձին ըզ-  
 ձեզ ուղիղ կառավարել: Այն, զիտ-  
 նայիք թէ քանի քանի անգամ զձեզ  
 իրբև մարդ կատարեալ կը մտածեն ի-  
 րենք: Բայց թէ ծնողաց բազմահոգ  
 խնամքն և թէ ամենաճարտագիտա-  
 սիարակութիւնն՝ առանց ձեր աշխա-  
 տութեան՝ բնաւ չեն կրնար զձեզ բարի  
 և օգտակար մարդ ընել: Դառնալով լու-  
 զարու վարժելու օրինակին, ըսէք ու-  
 րեմն. ո՞վ պիտի կարենայ ձեզի ջրոյն  
 ալեաց դէմ՝ մաքառիլ ուսուցանել եթէ  
 դուք չուզէք շարժիլ: Պէտք է շարժէք  
 զձեզ՝ որպէս զի յառաջագիմէք, և մեծ  
 աշխատութեամբ յօրինէք ձեր վաստա-  
 կը, օգտակար ըլլալով նախ ձեր անձին  
 և ապա ընտանեաց և հայրենեաց: Նըշ-  
 մար մը տուէք այն զգեստոց՝ զորս  
 չորս տարի առաջ ձեր վրայ կը կրէիք,  
 այժմ կարճ և նեղ կու գան ձեզի, ձեր  
 հասակն առաջ գնացեր ու դուք մար-  
 մնով մեծցեր էք, և քիչ մնացեր է սյ-  
 րական հասակին հաւատարեւու: Բայց  
 արդեօք ձեր միտքն և խելքն ու հան-  
 ճարն ալ յառաջ դիմեր են՝ նորանոր  
 գիտութեանց ստացմամբ: Արդեօք ու-  
 մանց ոմանց նման՝ դուք հս կ'ըսէք թէ  
 ես այն եմ՝ ինչ որ տարիներով առաջ  
 էի, նոյն գեղեցիկ և յարգելի գործերը  
 կ'ընեմ՝ ինչ որ երբեմն կը գործէի:  
 Ո՛չ, ո՞վ պատանիք, այն գործն որ տա-  
 սը տարի առաջ ձեզի համար ստուգիւ  
 առաքինութիւն էր, հիմայ կրնայ ակտ  
 ըլլալ. և այն որ նոյն միջոց ձեզ ի թե-  
 րութիւն կը համարուէր, այսօր թերևս  
 առաքինութիւն ըլլայ: Արդեօք կը թո-  
 զո՞ք այսօր՝ որպէս զի հազուեցընեն  
 զձեզ, լուան և բազկաց վրայ կրեն: Այ-  
 սօր չէք կարող՝ ընկերական զբաղանք-

Ներէ ընտրել զմին, որ ձեզ աւելի հա-  
ճերի է և անոր պարագիւր:

Այսպիսի փոփոխութեան պատճառ-  
կըլլան տարիներն. բայց տարիներն  
ձեզի պատճառ պիտի չըլլան յետադի-  
մութեան, և այն ազատութեամբ՝ որով  
զձեզ միշտ կը յորդորեն առաջ երթա-  
լու, պարտք մը պիտի գնեն ձեր վրայ  
յառաջադիմելու՝ ոչ թէ ինչպէս որ  
գուք կ'ուզէք, այլ ինչպէս որ պէտք է:

Հեռացէք ուրեմն երկու ծայրայեղ  
ախտաւորներէն, թէ այն անձինքնե-  
րէն, որք ժամանակէն առաջ կ'ուզեն  
հասունացեալ ըլլալ, և թէ անոնցմէ՝  
որք կատարեալ հասակի հանճարոյն և  
զործունէութեան կը սպասեն: Ո՛չ զք  
կրնայ մէկէն արդիւնաւոր մարդ ըլլալ.  
և այս թանկագին անունն կը արուի  
'ի վարձ՝ միայն այն երիտասարդին, որ  
առաքինութեամբ և քաղցրաբարոյու-  
թեամբ զարդարուած է: Աւաղ...  
կը գանուին ծերագոյնք՝ որք բնաւ  
մարդ եղած չեն: Նշանաւոր է Ներոնի  
այն յիմարութիւնն՝ որ տեսնելով թէ  
առանց գեռ յազմանակց հանդիսի  
մը փառքը վայելելու կը ձերանայ, հրա-  
ման տուաւ որ հանդիսին պատրաս-  
տութիւն տեսնեն և ժողովուրդն եր-  
թայ Յաղթութեան տաճարը՝ մատու-  
ցանելու աստուածոց յազմանակաց  
համար սահմանուած գահութիւնը: Ժո-  
ղովուրդն ստիպուեցաւ երթալու և  
հոն զՆերոն պատուելու, որ յաղթա-  
նակի զգեստոք և զիրքով շփացած և  
ուռած յառաջ կը դիմէր. բայց ժողո-  
վուրդն ծածուկ կը խնտար, իրարու  
հարցընելով՝ թէ « Ահաւասիկ յաղթո-  
ղի մը մատուցուելիք պատիւներն և օտ-  
ներն, բայց ո՞վ է զիւրցազնն »: Այսպէս  
օրչափ չափահաս մարդկանց ալ կրնայ  
հարցուիլ՝ թէ Ահաւասիկ մարդկու-  
թեան ամենայն ձևերն, բայց ո՞ր է  
մարդն: Համառօտ ըսենք, թէ պէտք  
է գիտնալ՝ որ մարդկութեան աստի-  
ճանին՝ միայն ապրիաց թուով չի հաս-  
նուիր, այլ պէտք է նաև հաստատուն  
կամք, համբերութիւն և աշխատասի-  
րութիւն. որով օգուտ քաղելով ան-

ցեալէն՝ զներկայիս իրեն ծառայեցընէ,  
և պատրաստուի կատարելու այն վիճա-  
կին պարտքերը, առ որ սահմանած է  
զինքը Նախախնամութիւնն:

ՊԱՐՏՔ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ

Յովանդակ ստեղծուած իրերն՝ ան-  
ընդհատ աշխատութիւն մ'են, և մար-  
դըս պարտաւորեալ է աշխատելու ըստ  
իրաւանց արդարութեան՝ եթէ ինք  
զինքը կատարելագործելու և եթէ ի-  
րեն վախճանական նպատակին հաս-  
նելու համար: Ո՛ր պատանիք, աչքեր-  
նիդ տիեզերաց վրայ դարձուցէք, և  
ըսէք՝ թէ արդեօք կայ ստեղծուած մը  
որ անգործ ըլլայ: Արեգակն իբրև հրա-  
կայ մը կը ծագէ ճիշդ իրեն սահմա-  
նուած ժամուն և ապա կը խոնարհի 'ի  
մուտս, անհուն ասպարէզ կտրելով և  
իւր լոյսը ուրիշներուն սփռելով. բռ-  
լոր աստղներն՝ որ մեր չորս կողմն կը  
շրջին, երբեք իրենց ընթացքէն չեն  
դադրիր: Գիշերն օրուան կը յաջորդէ  
և օրն գիշերոյն: և տարւոյն եղանակ-  
ներն անփոփոխ իրարու կը յաջորդեն:  
Երկիրս՝ զիտեցէք թէ արդեօք իւր բեղ-  
նաւորութենէն կը դադրի՝ երբեք. և  
միթէ տունկերն ալ իրենց որոշեալ ժա-  
մանակին չե՞ն բողբոջիր, մերթ տերև,  
մերթ ծաղիկ և մերթ պտուղ տալով:  
Տեսէք թէ ծովն ինչպէս կը շարժի, կ'ա-  
լէկոծի, կը ցածնայ և կամ կ'ուռնու-  
կը տեսնենք իւր մկանանց վրայ նա-  
ւեր, որք վաճառականութեամբ շատ  
հեռաւոր ազգեր իրարու հետ կը կա-  
պեն: Միթէ կրնաք գտնել կենդանեաց  
միջէն մէկն՝ որ անգործ կենայ: Թուշոց  
միջէն ոմանք աշխարհքէ աշխարհք կը  
ճանապարհորդեն, աւելի բեղնաւոր և  
առողջարար երկիրներ գտնելու հա-  
մար. այլք ընդարձակածաւալ աշխարհ-  
ներ կ'երթան, զանոնք իրենց գեղղեղ-  
մամբը զուարճացընելու համար. ոմանք  
ալ մետաքսեայ թեւ կը հիւսեն, իսկ  
այլք՝ իրենց ձագուց համար բոյն կը  
կազմեն, ոմանք ալ միջատներն ուտելով

օղբ կը մօզբրեն : Չորրորտանիներէն ու մանք՝ բեռներ կը տանին կը բերեն, ու մանք արօրին լծոյն տակ մտած՝ երկիր կը հերկեն, ոմանք ալ հեծնելու կը ծառայեն և կը պատերազմին, ոմանք թղթատարութեան կը ծառայեն և ս. մանք ալ տուններ կը պահպանեն :

Միթէ մարդն միայն՝ որ մտաց և մարմնոյ գեղեցիկ ձրիւք զարգարուած է, միթէ մարդն միայն, կ'ըսեմ, անգործ պիտի ապրի . միթէ պէտք և կարօտութիւն չունի որ զայն լեցնէ, կարողութիւն՝ զոր կատարելագործէ և վախճան՝ առ որ հասնի : Բովանդակ ստեղծուածոց միջէն՝ որ արեգական տակ կ'ապրին, ամենազեղեցիկն, քան զամէնն իմաստունն և զօրաւորն, հանդերձ իրեն նախամեծարութեամբ՝ կը կարօտի իրմէ ստորին բոլոր ստեղծուածներուն, որոնք նաև առանց մարդուն կրնան ապրիլ : Առանց մարդուն կը ծագէ արեգակն և կը մտնէ, օդն կը թափանցէ և կը շնչէ, ծոցն կ'ընթանայ և յետս կը դառնայ : Առանց գործակցութեան մարդուն՝ երկիրս կը բեղնաւորի և բողբոջներ կ'արձակէ . բոյսերն կը ծաղկին և կը պտղաբերին . լեռանց խորոց մէջ մետաղներն կը ձուլուին առանց մարդուն . ամէն կենդանի առանց իսկ մարդկային խնամոց կրնայ ապրիլ . բայց մարդն ոչ կրնայ ծնանիլ և ոչ ապրիլ՝ առանց օդոյն զոր կը շնչէ, առանց ջրոյն որով ծարաւը կը յազեցնէ, առանց երկրին ուսկից իւր օրնունդը կը ճարէ : Ի՞նչպէս պիտի համբերէր ձմեռանային սաստիկ ցրտոյն՝ առանց կաշոյ և բուրդի, եթէ չպատրաստէին զայն իրեն : Այսպէս նաև միթէ պիտի կարենար պաշտպանուիլ առանց փայտերու, քարերու և առանց մետաղաց, որք իրեն կարօտութիւնը կը լեցընեն . դարձեալ ի՞նչպէս պիտի մեծնար առանց իւր մէկ նմանին՝ որ զինքը խնու մէ . ու դատարարկէ : Արդ մարդն այսպիսի կարօտութիւն ունենալով ուրիշ անթիւ էակաց և մասնաւորապէս իւր նմանին, պիտի կարենայ չըլլալ ճանաչող ուրիշէն ընդունած բարեբա-

րութեանց, առանց պաերտիս գրաւ նուելու . պիտի կարենայ առանց անիւրաւելու հրաժարել՝ ուրիշին ընելու այն ինչ, զոր այնչափ գտնադան դիպուածոց մէջ ուրիշն իրեն համար գործեր է և կը գործէ անգագար :

Քիւլիէ՛ ներկայ դարուս առաջին բնագէտն, բարբառի Նոր գիտութիւն մը հնարեց, ուսկից նաև ուրիշ երկուք ալ առաջ եկան, որ և ստուգել ամենամեծ և խորին զննողութիւն է . կ'ըսէր թէ ամէն շնչաւոր էակաց անդամներն և գործարանք՝ իրենց վերջին վախճանին, սեփական նպատակին և այն կենաց համեմատ են, առ որ զիրենք սահմաններ է արարչագործն բնութեան :

« Մարդս՝ կ'ըսէ Պալպոյ, եթէ ուշագրութիւն գնեմք՝ գործարանակազմութեան ընդհանուր կենդանեաց դասակարգին մէջ, շատ գծուարութեամբ իրեն բերմունքներն և նիւթական նպատակը կը յայտնէ : Իրեն կամխըն ուրիշ կենդանեաց և ոչ մէկուն ցուցած գերագոյն կատարելութեան աստիճանն ունի, ոչ ուժոյ մէջ, ոչ արագութեան մէջ, ոչ առաձգութեան մէջ և ոչ տեսողութեան . ուստի մարդս մասնաւորապէս սահմանեալ չէ՝ ոչ պատերազմելու, ոչ փախելու, ոչ ցատկելու և ոչ տուկալու : Իրեն համար բացարձակ կերպով որոշուած կերակրոյ տեսակ մը չունի՝ ատամնային դրութեան մը սեփականեալ, և ոչ իրեն մորթոյն և անդամոց համար սահմանուած բնագրումներ և կլիմաներ . մի միայն եզականութիւն մը, մի միայն կատարելութիւն կը տեսնուի մարդուս կամխըն վրայ, որ է ձեռքն, գործի աշխատութեան, և մի միայն սովորութիւն սեփական է մարդկային ազգի, և է այն՝ բերումն առ աշխատութիւն : Բայց եթէ իրեն մերկ կամխըն անցնինք և քննենք զմարդն իր անդամոց լրութեանը մէջ, իւր մերկութեամբ՝ ամէն կլիմայի տակ ալ զգեստուց կը կարօտի, նաև օդոյն ճնշումներէն նեղուած՝ հանգիստ առնելու պէտք կը զգայ : Իւր տկարութիւնն կը ստիպէ զինքը՝ որ իւր անձը թշնա-

մայն ձեռքէն պաշտպանելու և իրեն պարէնը հայթայթելու համար՝ գինուց կարօտի. ահա իրեն այս ամէն թերութեանց տալը աշխատութեամբ միայն կ'աւճուի, ուստի բոտ ուղիղ հետեանաց՝ մարդս ամէն բանէն աւելի հարկաւորաբար աշխատելու սահմանուած է:

Եւ եթէ մեռեալ բնութեան դիտողութենէն՝ անցնինք մարդոյն կենդանի բնութեան դիտողութեան, որ միայն յօգաձայնն է, միայն խօսուն, և ինքն միայն կրնայ իւր յատուկ գաղափարներն և յիշատակները հաղորդել պիտոյ, ո՞վ է որ ասկէջ չհետեցընէ՝ թէ մարդն միայն սահմանեալ է փոխադարձ իրարու օգնելու՝ քան ուրիշ որ և իցէ կենդանի, ընկերանալու՝ որ աշխատութիւն մ'է, կատարելագործելու արգէն իսկ ըրածն՝ որ նորոգ աշխատութիւն մ'է, մշտնջենաւոր և անսահման աշխատութիւն մը՝ ժամանակին և մարդկային բնակութեան տեղութեան չափոյն համեմատ:

Դարձեալ, փոխանակ մեռեալ կամ կենդանի մարդուն նիւթական մասանցը վրոյ խորհելու, կրնանք նաև իրեն հոգեկանութիւնը մտածել, որով շատ լաւ կը զանազանի նա՝ բոլոր շնչաւոր էակներէն. և այս իմաստասիրական խուզարկութեամբս՝ ալ աւելի պայծառ պիտի տեսնուի իրեն առ աշխատութիւն ունեցած սեպհական որոշողութիւնն: Բնաձիբ կարողութիւն մը՝ շնորհուած էակի մը՝ կը պարտաւորէ որ զայն 'ի գործ դնէ. իմացողութիւնն, յիշողութիւնն, միտք, կամք և ուրիշ որ և իցէ մարդուս հոգեկան կարողութիւններն՝ ոչ միայն անօգուտ պիտի ըլլային, այլ և ծանր, անհաճոյ և վնասակար մարդուս՝ եթէ զանոնք 'ի գործ չդնէր. և իրաւցընէ այսպէս կ'ըլլայ այն անձանց՝ որք չեն գործածեր զանոնք աշխատութեամբ. բայց այսպիսի անհոգութիւն մը, այսպիսի արհամարհութիւն մը բացառութիւն է. իսկ աշխատութիւնն կանոն է և ընդհանուր պահուած օրէնք:

Այնպիսի մտաց՝ որք նիւթական աշխատութեան կը պարապին, հոգեկան գերազանց և գրեթէ բոլորովին տնձա՛նօթ աշխատութիւն մը կը տեսնուի՝ հայեցողականաց աշխատութիւնն, որք իրենց հոգւոյն բոլոր զօրութեամբ՝ այնչափ կը մօտենան կենաց և շարժման աղբեր, որ կարծես թէ կերպով մը հաղորդ կ'ըլլան աստուածային անխոփոխութեան. նման այն անուոյ՝ որք աւելի մերձաւոր ըլլալով շարժիչ զօրութեան՝ այնչափ երազութեամբ կը շըրջին, որ հեռու կիցողին աչքին անշարժ կ'երևնան:

Եւ եթէ հայեցողական իմաստասիրութենէն անցնինք պատմականին, և եթէ դառնանք մարդկութեան երկար կենաց կտրած ճամբէն, ամենէն աւելի հաստատուն, աճեցուն, ընդհանուր եղած իրն, որ մեր առջև կ'ենէ՛ն՝ աշխատութիւնն է. աշխատութիւն՝ միշտ և ամէն տեղ հազար ու մէկ կերպով 'ի գործ դրուած. աշխատութիւն անհրաժեշտ պիտոյից պատճառաւ, աշխատութիւն զրաղանաց պատճառաւ, աշխատութիւն պարզ հաճոյից համար, աշխատութիւն աղքատին՝ ապրելու, մեծատան՝ ձանձրութենէ ազատելու, իմաստնոյն՝ ինքզինքը զոհացընելու, տկարին՝ իրեն նուաստութենէն բարձրանալու, հզօրին՝ իրեն մեծութիւնը պահելու համար. աշխատութիւն՝ ոչ միայն ամենէն 'ի գործ դրուած, այլ նաև ամենուն՝ վէճի, նախանձաւորութեան, փառասիրութեան, զրպարտութեան և պատերազմաց նիւթ հղած, այնպէս որ կրնայ ըսուիլ թէ 'ի սերլըբանէ հեա՛ն մարդկային ամէն ընկերութեանց նպատակն՝ կամ գէթ գըլխաւոր արդիւնքն՝ եղած է բազմացընել աշխատութեանց թիւը:

Այսպէս նաև առանց խորին գիտութիւն մ'ունենալու, նոյն իսկ նուազ գիտնոց աչքին առջև ալ՝ ամէն տեղ մարդկային աշխատութեան անժխտելի ապագոյցներ կը հանդիսանան յիշատակարանք: Մեղ մերձակայ շատ քաղաքներու՝ ինչպէս նաև մեր բնա-

կածին մէջ, սովոր է ամէն ծերունի իրեն երիտասարդութեան կարծատե տարիներուն մէջ փոփոխուած շէնքերուն նախկին ունեցած գրկցը վրայ մտածել և խօսել: Բայց եթէ մէկն այն բնական կամ արուեստական դիտարաններուն վրայ ելնէ, տեսնելով ընդարձակագոյն ևս անբարեկարգ երկիրներ, կրնայ աւելի դիւրութեամբ ընդլայնել այս դիտողութիւններս: Իհարին է, կ'ըսեմ, մտօք դէպ 'ի այն առաջին ժամանակները վերաթեւել, մինչդեռ անմարդի և անշէն էին բովանդակ երկիրներն: Ո՛րչափ աշխատութիւն 'ի գործ գրուած է այն ժամանակէն սլըսեալ անտառաց մայրիները կոտորելով ու դաշտերը հարթայատակ ընելով, կանոնաւորելով ջրոց յոխուուն ընթացքը ու դաշտերուն միջէն զանոնք վազցընելով, երբեմն հեռաւոր աշխարհներէ օգտակար ծառեր բերած ու շէնցուցած ըլլալով ամայացեալ երկիրները, և երբեմն կամարչներ, ճամբաներ, գիւղեր և քաղաքներ կառուցանելով: Ո՛րչափ աշխատութիւն եղած է հազար ու մէկ անգամ քան զելով ու վերստին շինելով այս ամէն բաները. որչափ տան մը վրայ, սենեկի մը մէջ, ուր երբեմն երկարատև յաջորդութեանց աշխատանք տմփոփուած կը գտնուին: Կ'ըսուի սովորաբար թէ բնութեան երևոյթն կ'ամբարնայ միտքը՝ խորհելու Արարչին ու արարչագործութեան վրայ. բայց ոչ նուազ նաև մարդկային գործոց տեսարանն՝ կ'ամբարնայ մարդու միտքը առ զարդացումն արարչագործութեան, և առ արդիւնաւորեալ և արդիւնաւորելիք զիտաւորութիւն Արարչագործին, միայն թէ մէկն ուզենայ խորհրդածել: Օրէ օր նորանոր աշխատութիւններ իրարու վրայ կը բարդուին՝ ուրիշ ամէն ժամանակէ աւելի մեր դարուն մէջ: Ոչստի ցնորական երկակայութիւն մը չէ, եթէ գաղափարով փոխադրուիք այն անձնօթ, բայց ստոյգ գալիք ժամանակին, յորում մարդկային ձեռնարկը պիտի ծածկեն ամբողջ երկրիս

մակերևոյթը, յորում բովանդակ երկրագնդոյս արտաքին կերպարանքն պիտի փոխուի աշխատութեամբ: Ով որ կ'աշխատի երկրիս վրայ՝ կրնայ մըտածել որ կը ծառայէ արարչագործութեան նիւթական նպատակին. իսկ զայն որ գատարկ կը կենայ՝ պէտք է կշտամբէ այս մտածութիւնն՝ թէ ինքն միայն այն նպատակէն ապստամբ է:

Մարդուս վերջին վախճանն՝ անտարակոյս աշխարհէս դուրս ըլլալով, ուստի ժամանակաւոր, անցաւոր և երկրաւոր իրերէ և ոչ իսկ մին է: Աշխատելու կարողութիւնն՝ որ ստեղծագործութեան միջոց մարդուս աւանդուեցաւ, աներկբայելի հաւաստիք է՝ թէ նա իւր անմեղութեան ու երկմտիկ վիճակին մէջ ալ՝ զայն 'ի գործ պիտի դնէր. իսկ գատապարտութիւնն՝ մարդոյն վրայ նոր աշխատութիւն մը չաւելցոյց, այլ ինչպէս Ս. Գրոց խօսքէն յայտնի է, ոչ թէ միայն « կերիցես զհաց քո », այլ « քրտամիք երեսաց քոց կերիցես զհաց քո ». ահա այսու մարդոյն աշխատութիւնը սաստկացոյց՝ 'ի պատիժ իրեն անհնազանդութեան. վասն զի կատարեալ մարդոյն նախկին վիճակն՝ անգործութիւն չէր, այլ հանգիստ աշխատութիւն մը:

Այսպէս ահա որչափ աւելի մարդս իւր նպատակին ու անձին կատարելութեան կը մերձենայ, այնչափ աւելի կ'աշխատի: Աշխատութիւն ու քաղաքականութիւն գրեթէ համանուն են, և կամ ըսեմ՝ գրեթէ ժամանակակից, որք միշտ զոյգ կ'ընթանան: Թափառական ցեղի անձ մը՝ հաստատուն բնակութիւն ունեցող սաղգի մը անձէն աւելի նուազ կ'աշխատի: Այսպէս նաև փոքր և սահմանափակ ազգի քաղաքացի մը՝ շատ նուազ աշխատութիւն ունի՝ քան թէ մեծ թագաւորութեան մը և կամ մեծամեծաց հետ յարաբերութիւն ունեցող անձ մը: Հին ազգերն՝ բողոքատեմաբնորոցս՝ շատ նուազ կ'աշխատէին. որոց ոմանք երբ բաւական կարողութիւն ունենային՝ բո իրենք կարենային չաշխատել, կը դադրէին աշ-

խատուութենէ ու իրենց գերիները կը ծառայեցընէին: Հին ժամանակ ազատ մտորդիկ՝ միայն հարկաւոր եղած միջոց կ'աշխատէին, թէպէտ և աշխատութիւնն երբեմն բացառութեամբ ազատական դործ ալ համարուած է. ընդհանրապէս ազատականաց աշխատութիւնն հնոց մէջ յարգ չտացաւ. բայց շուտ մը՝ ՚ի քրիստոնէութեան ժողկիլ սկսաւ: Քրիստոնէութեան գերբնական արգասիքներն՝ իրեն սկզբնաւորութենէն սկսեալ կատարուեցան. բայց այն արգասիքներն որք պարզապէս երկրաւոր են՝ արգէն իսկ յարդիւնս պալ սկսած են և տակաւ ալ պիտի գան: Այսպիսի կերպով ահա զարգացաւ ազատաց աշխատութիւնն և տարածուեցաւ քրիստոնէութեան մէջ: Նախ գերեաց ազատութեամբ, զոր յաջողուց եկեղեցին ամէն կերպ միջոցով: Ետոյ անգործ բարբարոսաց և թափառական ազգաց՝ քրիստոնէական քաղաքակառուցեան ծոցը զիմելով. դարձեալ շատ մը հռովմէական ժողովրդոց, որոնք հին ծառայական վիճակէն բարձրացած էին և իշխանական անուն կը կրէին, եկեղեցւոյ ծառայութեան մէջ մտնելով, որոյ ծառայութիւնն նուազագոյն ծանր էր քան իրենց նախկին վիճակինն: Յետոյ՝ և քիչ ժամանակի մէջ այս ամէն ժողովրդոց բոլորովին ազատութիւն շնորհելով, և քրիստոնէութեան միջէն վերցընելով միապետական բռնաւոր իշխանութիւնը ու զարգացընելով իւրաքանչիւր ազգաց զանազան գործունեայ աշխատակցու-

թիւնը ՚ի քրիստոնէական մտութեան, իթէ այնպիսի ժամանակներու մէջ ըլլայինք, յորում գեռ քրիստոնէութեան արդիւնքներն տարախուսական իր մը ըլլային, թերես անոնց վրայ մեր վտահուցութիւն չունենալն արգարտնար, բայց ինչպէս կրնանք ժխտել այն արգիքներն՝ այնպիսի ժամանակի մը մէջ, յորում գրեթէ բոլորովին ջնջուեցաւ գերութիւնն, և ազատական ու յարգելի աշխատութիւնն ամէն տեղ տարածուեցաւ, և գրեթէ բոլոր աշխարհք տիրեց ու ամէն ժողովրդոց զխաւոր ու մի միայն չահն եղաւ: »

Յիրուի մեծ իմաստասիրի արժանաւոր խորհուրդ մ'է, զոր կեսար Պապոյ կու տար պատանւոյ մը՝ որ անգործ կեցեր էր՝ բարեկամաց յաճախութեան պատճառաւ, որ միշտ իւր չորս կողմը կը պատէին. « Բարեկամներն, ով պատանի, ճշմարիտ բարեկամներն չեն կրնար շատ ըլլալ: Կ'ուզես դու զանազանել հաւատարիմ, համեստ և կրօնասէր բարեկամներն՝ ամբարշտներէն ու սուտակասպաններէն. — չըլլայ թէ զանոնք իրենց գովութիւններէն ու յանդիմանութիւններէն դատես, զոր կու տան քեզի. աւելի ուշ գիր՝ թէ անոնցմէ ով զքեզ աշխատութեան կը յորդորէ և ով դատարկութեան. և այսպէս ապահով դիտցիր՝ որ առաջինն զքեզ կը սիրէ, իսկ երկրորդն քեզի կը նախանձի. և առաջինն թէպէտ տգէտ կամ շինական ալ ըլլայ՝ անոր միտ դիր, և երկրորդէն հեռացիր՝ թէ և զուարճախօս ալ ըլլայ: »

\* \* \*

